

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԹՈՂՈՂ ՄՈՒԿԸ

A 8
36/1

4074



891.99տ.
9-47

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹԵԼԵԳՐԱԿ

1936

1956





891.542

891.990.

9-47

Նվիրում եմ իմ պիտանքը
Վորդի ԻԼՅՈՒԶԱՅԻՆ

ս. յ.

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Թ Ռ Չ Ո Ղ Մ Ո Ւ Կ Ը

ՀԵՂԻՆԱԿԻ ՆԿԱՐՆԵՐՈՎ

1956

4974



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1 9 3 6

Պատ. խմբ. Ա. Հայրյան
Լեզվ. խմբ. Հ. Պետրոսյան
Տեխ. խմբ. Տ. Խաչվանյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան



Պետհրատի տպարան
Յերեան, II Գնունի, 4
Գլավլիտի լիազոր 407, պատվեր 327
Հրատ. 3552, տիրաժ 3000

6-2

Գին՝ 1 Ռուբլի



797
41

Ա. Ռ. Ա. ԶԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

— Ա՛խ, յեթե կարողանայի թռչունի պես թռչել, վճռքան հրաշալի մարդանք ե սավառնել ողորմ,—ասաց Ուրվիլը՝ նախանձելով ճախրող բազեյի ծուլլ պտույտներին։

— Յեթե մարդը հասկանար թռչունի թռիչքի գաղտնիքի մի չնչին մասը, նա կհասներ անշուշտ թռչունին,—պատասխանեց Վիլլուրը։

Այդպես ելին խոսում այն ժամանակ, յերբ ողից ծանր՝ թռչող մեքենաները կառուցված ելին խաղալիքի ձևով, պատահալիան փորձի հիման վրա, և չունեյին խորը գիտական հիմք։

Կենդանի թռչողներն*) անշուշտ ուսումնասիրության առիթ ելին՝ թռիչքի գաղտնիքը հասկանալու համար։

Արծվի գետնից կտրվելն ու ոգ բարձրանալը մեծ որինակ եր Ռայտ յեղբայրներին—իրենց կառուցած ողանավը՝ գետնից կտրվելու որենքը հայտնաբերելու համար։ Մարդկությունը թևեր ստացավ հանձինս Վիլլուր և Ուրվիլ Ռայտ յեղբայրների։ Նրանց կատարած ուսումնասիրություններին, ինքնուրույն փորձերին ծանոթանալու և հասկանալու անհրաժեշտությունը մեծ ե մեր պատանեկության, մասնավորապես պլաներիստ պատանեկության համար։ Ռայտ յեղբայրների մանկության սիրած խաղալիքը՝ թռչող մոմկը, առիթ հանդիսացավ ինքնուրույն կերպով հնարելու մարդկության թևերը։ Ռայտ յեղբայրները, վորպես ողագնացության առաջին պիոներներ, խորապես հասկացան կենդանի թռչողների թռիչքի գաղտնիքը։ Նրանք ուսումնասիրեցին և հնարեցին թռչող մեքենայի շարժիչ ուժը։

*) Թռչունները, թիթեռները, մոծակները և այլն։

Առանձնապես խիզախ եր գերմանացի ինժեներ Ոտտո Լի-
լենտալի հնարած մեքենան, վորը, նման եր թռչունի թևերի:

Այդ մեքենան արդյունք եր յերկարատև գիտական ուսում-
նասիրության, սակայն այդ թևերն իրենց կառուցվածքով դեռ-
ևս չէյին կատարելագործված և թռիչքն ողուձ վայրկյաններ եր
տևում:

Ռայտ յեղբայրներն առաջինը յեղան, վորոնք թռիչքի տե-
վողությունը յերկարացրին մեկ ժամից ավելի:

Յերեսունհինգ տարի յե անցել այն օրից, յերբ մարդկու-
թյունը թևեր ստացավ: Այդ թևերի համար մենք պարտական
ենք ողագնացության պիոներներ Ռայտ յեղբայրներին, վո-
րոնց հնարած մեքենան զարձակ մեծ գործի հաջող սկիզբը:

Ողագնացությունն այնուհետև զարգացավ մեծ արագու-
թյամբ, նրա հիմքը Ռայտ յեղբայրների ողանամբն է, իսկ թռու-
չող մոկը՝ այդ մեծագույն գյուտի առիթը:

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Թ Ռ Զ Ո Ղ Մ Ո Ւ Կ Ը



Վիլբուր Ռայտ յեվ Օրվիլ Ռայտ
յեղբայրները

1878 թվի աշնանալին մի
ցուրտ օր եր, ալնքան ցուրտ,
վոր Միլտոն Ռայտի փոքր
վորդիները—Որվիլը և Վիլ-
բուրը—տանն ելին խաղում:
Այդ ժամանակները նրանք
նոր ելին տեղափոխվել Այո-
վա նահանգի Սեդար Ռապիդ*)
քաղաքը: Քաղաքին ծանոթ
չէյին, անից հեռու գնալ չե-
լին վստահանում: Մանավանդ
նրանց մայրը՝ Սյուզան Բեռ-
ներն սպառնում եր, վոր հըն-
դիկները կփախցնեն: Իսկ
քաղաքից վոչ շատ հեռու ապրում ելին հնդիկները: Նոր
բնակարանը դեռևս հետաքրքրությունը չէր կորցրել: Հալ-
րիկի արհեստանոցում յերեխաները սիրում ելին գործիք-
ներ գննել, իսկ տանը թերթել նկարագարդ գրքերը:

Այդ օրը Միլտոն Ռայտը նոր եր վերադարձել հե-

*) Սեդար Ռապիդ քաղաքը գտնվում է Այովա նահանգում,
Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

ռավոր ճանապարհորդութիւնից: Փոքրիկներին ուրախաց-
նելու համար նա ներս մտաւ՝ ձեռքին մի տարորինակ
խաղալիք: Նա պտտեց խաղալիքի խցանե պտուտակը և
բաց թողեց: Խաղալիքը վժժալով բարձրացավ, հանդիպե-
լով առաստաղին՝ ցած իջավ ու նորից բարձրացավ, թռ-
չունի պես սավառնեց:

— Նա կենդանի թռչող է, իսկական թռչող մուկ,
— բացականչեց բերկրանքով յոթը տարեկան փոքրիկ Որ-
վիլը:

— Իսկ ի՞նչից է, վոր խաղալիքը վայր չի ընկնում և
թռչում է, — լրջորեն հարցրեց Վիլբուրը, վորը չորս տա-
րով մեծ էր Որվիլից:

Այդ ժամանակ խաղալիքի գույգ թևերը և պրոպելլերը
դադարեցին պտտվելուց, խաղալիքը հանդարտ ցած իջավ
ու կարծես հոգնած պառկեց հատակին: Վիլբուրն անհամ-
բեր վազեց դեպի խաղալիքը. նա ուզում էր շուտ հաս-
կանալ, թե ինչից է, վոր թռչում է խաղալիքը: Իսկ
Որվիլը դեռևս վախենում էր ձեռ տալ, կարծելով թե կեն-
դանի չէ:

— Այս հելիկոպտեր է, — ասաց ժպտալով Միլտոն հայ-
րը, վորը հետևում էր մանուկների փորձերին:

— Իսկ չես կասեմ, վոր այս թռչող մուկ է, — կրկնեց
Որվիլը:

— Դու իհարկե գայլ ել կասես, — հեգնեց Վիլբուրը:

— Հետաքրքիր է իմանալ, թե ինչպես է սարքված,
վոր վայր չի ընկնում, — կրկին հարցրեց Վիլբուրը՝ լրջու-
թյամբ զննելով խաղալիքը:

— Այ, տեսեք, այս շինված է սպիտակ թղթից ու
բամբուկի նուրբ ձողերից: Այս ել՝ ռետինե թելն ու
խցանը: Պտտեցրեք խցանե պտուտակը և բաց թողեք
խաղալիքը:

Յեղբայրները հերթով փորձեցին թռցնել խաղալիքը:

— Այժմ տանենք՝ թող կետը*) թռցնի, — ուրախու-
թիւնից բացականչեց փոքրիկ Որվիլը: Նա շատ էր սի-
րում իր գանգրահեր խարտյաշ քույրիկին:

— Այս խաղալիքի համար կետը դեռ շատ փոքրիկ է,
նա կփչացնի, իսկ հայրիկն զգուշացրել է, վոր լավ պա-
հենք:

— Մենք կաշխատենք հսկել և սովորեցնել նրան:

Նրանք խաղալիքը տարան խոհանոց և թռցրին: Խա-
ղալիքի վժժոցից փոքրիկ կետը կծկվեց մայրիկի փեշերի
տակ ու լաց լեղավ: Նա հանգստացավ, լերբ տեսավ, վոր
մայրիկը վոչ պակաս բերկրանքով զննում էր խաղալիքը:

— Վհրքան է վճարել հայրիկը:

— Մեկ դոլլար, — պատասխանեցին լեղբայրները մի-
աժամանակ:

— Մեկ դոլլար, բավական շատ է այսքան նուրբ խա-
ղալիքի համար: Աշխատեցեք շուտ չփչացնել:

Առաջին անգամ դրսից գնված խաղալիքն զգալի
չափով թանկ էր:

Մեկ դոլլար հատկացնել խաղալիքի — Ռայտերի բազ-
մանդամ ընտանիքի համար այդ խոշոր գումար էր: Մա-
նավանդ մանուկների մեծ լեղբայրները — Ռայսլին ու
Լորին — սովորում էին կոլեջում: Իսկ կոլեջում սովորելը
մեծ ծախս էր պահանջում: Այդ իսկ պատճառով Սյուզան
Բեռներն անտրտուն չէր կատարում եր ամեն տեսակի աշ-
խատանք՝ խուսափելով ավելորդ ծախսերից: Առաջին ան-
գամ էր այդ, վոր մանուկները դրսից գնած խաղալիք
ունեցան: Որվիլը և Վիլբուրը միշտ իրենք էին հնարում
ու սարքում իրենց խաղալիքները:

Թռչող մուկն այնքան շատ սիրեցին Ռայտ լեղբայր-
ները, վոր շարունակ խաղում էին թե տանը և թե դըր-

*) Յեղբայրների քրոջ անունը Կատերինա էր, բայց նրան
կրճատ կեռ էին կանչում:

սում: Իսկ չերբ խաղալիքի վորևե մասը վնասվում եր,
 նրանք անմիջապես նորոգում եյին: Վերջապես մի որ
 խաղալիքը փշացավ ու դադարեց թռչելուց: Որվիլը և
 Վիլբուրը խաղալիքը քանդեցին, մասերի բաժանեցին, վոր
 ավելի լավ հասկանան, թե ինչպես և ինչից ե կառուց-
 ված այդ խաղալիքը: Ռայտ չեղբայրները հիշողության
 մեջ մնաց այդ խաղալիքի չափսը, ձևը և կառուցվածքը:

*
* *

Միլտոն Ռայտի ընտանիքում յերբեք ժամանակը զուր
 չեր անցնում: Որվիլը և Վիլբուրը, բացի դպրոցական
 դասերը պատրաստելուց, ազատ ժամերին միշտ զբաղվում
 եյին ընթերցանությամբ: Նրանք կարդում եյին գիտա-
 կան գրքեր, նորություններ: Վիլբուրը հատկապես շատ
 եր հետաքրքրվում պատմությամբ: Նա կարդում եր հունա-
 կան և հռոմեական հերոսների կյանքից: Յերեկոները
 Վիլբուրն անկողնում պատմում եր Որվիլին իր կարգա-
 ցած գրքերի հմալիչ բովանդակությունը: Նրանց խոսակ-
 ցությունը հաճախ տևում եր մինչև ուշ գիշեր: Յեղբայր-
 ներին ընդհատում եր մայրը, սպառնալով, վոր չեթե
 հայրիկը լսի՝ անպայման կծեծի: Իսկ հայրիկը չեր հրա-
 ժարվում յերբեմն ծեծելուց: Բացի պատմությունից, Վիլ-
 բուրը կարդում եր իրենց ժամանակակից ողագնացության
 մասին և հաղորդում Որվիլին: Հայրիկի գրադարանն ա-
 մենից սիրած տեղն եր: Այստեղ մանուկների համար
 բազմաթիվ հետաքրքիր գրքեր կային: Որվիլը մեծ մա-
 սամբ գրքերը թերթում եր՝ նկարներին նայելով, նույ-
 նիսկ մի քանի անգամ: Իսկ Վիլբուրը կարդում եր հարցերի
 հաջորդականությամբ: Գրքերը դասավորել եր Սյուզան
 Բեռները՝ նկատի ունենալով մանուկների հետաքրքրու-
 թյունը:

Յեղբայրները ժամանակ չեյին գտնում ինքնուրույն

խաղալիքներ ստեղծագործելու և խաղեր հնարելու: Որ-
 վիլը և Կետը ավելի շատ խաղում եյին հարևանի յերեխա-
 ների հետ: Վիլբուրի համար փոքրիկների հետ խաղալը
 նսեմություն եր: Որվիլը փոքրիկներից մի բանակ եր
 կազմում և ինքը դառնում հրամանատար: Կետին յերբեմն
 նշանակում եր իրեն ոգնական: Կետը բավական վախկոտ
 եր,—նա կամ պարտվում եր, կամ շուտ թողնում հեռա-



Վիլբուրը ղեկավարում ե մտնական խաղը—հնդիկների կյանքից

նում: Այսպիսի խաղերի ժամանակ Վիլբուրն իրեն պատ-
 կերացնում եր պատմական հերոսների դերում: Նա մաս-
 նակցում եր՝ մենամարտելով ամբողջ բանակի դեմ: Վիլ-

բուրը շատ եր սիրում հնդիկները խաղը: Այդ խաղը նա սովորել եր Սեդար-Ռապիդում: Նա այլևս չեր վախենում հնդիկներից, ինչպես մի ժամանակ սպառնում եր մայրը. նա ինքն անձամբ տեսել եր հնդիկներին և շատ հավանել: Հնդիկները շատ նման էին «Ռոբինզոն Կրուզո» գրքի վայրենիներին: Վիլբուրը մենակ ղեկավարում եր այդ խաղը և աշխատում եր շատ նմանվել նրանց: Նա գլուխն եր դնում ինքնագործ փետուրե գլխարկը, ներկում եր դեմքը վարմիր ներկով: Գունավոր գծերով բարձի մի լեքես փաթաթում եր կոնքին: Նույն ձևով հագնվում էին նաև մյուս լեքեսները: Բայց Վիլբուրը վորպես ղեկավար աչքի եր ընկնում իր շնորհալի տեսքով: Նա բարձրահասակ եր, նիհար, խաղերի մեջ ճկուն, և այդ ոգնում եր ղեկավարի դերը կատարելու: Թե ինքը՝ Վիլբուրը, և թե բանակը—գինվում էին նետ ու աղեղով: Նրանք ուռա կանչելով վազում էին Սեդար-Ռիվեր գետափը: Այնտեղ վորպես թե գայլի վորջ կար: Բանակը պատկերացնում եր հնդիկների վորսը գայլերի դեմ:

Բազմազան էին Ռայտ լեղբայրների խաղերը և հնարագիտությունները: Բացի խաղեր ու խաղալիքներ հնարելուց, նրանք կառուցում էին նաև շատ այլ պիտույքներ. այս դեպքերում Սյուզան Բեռները մասնակցում եր և ոգնում լեքեսներին: Նրանք լեքեքով կառուցեցին մի սահնակ: Նորոգեցին տան ջարդված աթոռները և իրերը:


Վիլբուրը մենակ կառուցեց մի նավակ, այնքան հաջող, վոր Լորինի հետ թիավարում էին Սեդար-Ռիվեր գետում: Նա կառուցեց նաև հենարանով աթոռ հիվանդ մայրիկի համար: Յերկու լեղբայրների մանկական ամենամեծ հնարագիտությունը խառատի դազգյահն եր (շրջատաշ մեքենա): Նրանք կառուցել էին այն դազգյահի պես, վոր տեսել էին իրենց պապիկի — Յոհան Բեռների — արհեստանոցում: Որվիլը և Վիլբուրն ինքնագործ

դազգյահն աշխատեցնելու համար ոգնություն կանչեցին իրենց ընկերներին: Հետաքրքիր եր տեսնել, թե ինչպես լեքեք ժամանակ լեքեսները բոլորն ել վիճում էին դազգյահի շարժիչը սեղմելու համար: Վեճը դադարեց, լեքեք Վիլբուրը բոլորին ել նստեցրեց շարժիչ վոտքին: Բարեբախտաբար շարժիչ վոտքն այնքան լեքեք եր, վոր վեց զույգ վոտքերի համար տեղ չեղավ: Վիլբուրը գլխարկը հանեց և նշան տվեց: Բոլորը միասին սեղմեցին շարժիչը: Դազգյահի անիվն աղմուկով պտտվեց, լեքեք պտտվեցին մարմարե առանցքակալները՝ քսելով ողակին: Մանուկների բերկրանքը և դազգյահի աղմուկը միախառնվելով խլացնում էին ու չէին թողնում, վոր նրանք իրար հասկանան: Նրանք մինչև իսկ չլսեցին նոր սկսվող փոթորիկի վոռնոցը: Կատաղի քամին զանգալատան հսկա թիթեղը պոկեց ու շարտեց սրահի կտուրը, վորտեղ մանուկներն զբաղված էին դազգյահով: Կարճ ժամանակից հետո նրանք ցրվեցին: Պատահում եր, վոր լեղբայրներն որերով դադարեցնում էին խաղը, լեքեք գրքի և այլ կարիքների համար նրանք դրամի կարիք էին զգում: Միլտոն Ռայտի աշխատավարձը չեր բավարարում: Ռայտի ընտանիքում կարիքը մեծ եր. Որվիլը, Վիլբուրը և Կետը, ծնողներին ոգնելու համար, իրենց կառուցած սալակով բակերից վոսկոռներ ու լեքեք լի կտորներ էին հավաքում և իբրև հումուլթ հանձնում գործարանին, փոխարեն ստանալով մի քանի ցենտ: Հարկ չեղավ մինչև իսկ, վոր տասնմեկ տարեկան Վիլբուրն աշխատի մի կալվածատիրոջ հողամասում: Այնտեղ նա չհաշտվեց տիրոջ հետ և հեռացավ:

Յերեկոները Ռայտի ընտանիքը խմբվում եր սեղանի շուրջը: Մեծ վորդիները — Ռեյխլին ու Լորին — կոլեջնավարտելուց հետո մնացին Այովա քաղաքում, ուր և մշտապես առանձին ապրեցին:

Հայրը, մայրը, փոքրիկ Կետը և լեքեք լեղբայրներն

ավելի սերտ կապվեցին իրար հետ: Նրանք շախմատ ելին խաղում. սիրով խոսում ելին որվա և ժամանակի նորութուններին մասին: Կրակոտ վիճաբանում ելին գիտական հարցերի շուրջը: Նրանց խոսակցության առարկան ողագնացների փորձերն ելին: Հենց այդպիսի մի լերեկո լեր,



Ռայսի քննանիք

լերը ցեղբայրների գլխում մի նոր և հետաքրքիր միտք ծագեց:

— Յեթե մեկը կարողացել ե թուշող մուկ հնարել և ստիպել, վոր նա թուշի, ինչո՞ւ մենք ել չենք կարող նույնն անել, — մի անգամ հարց ավեց Որվիլը:

— Յես կարծում եմ՝ կարող ենք, — պատասխանեց մտազբաղ Վիլբուրը:

Նրանք ձեռք բերին բամբուկի բարակ ձողիկներ, սպիտակ թուղթ, խցան, մի կտոր թեթև փայտ, ռետինե թել, սոսինձ և ծլվեցին դեպի հայրիկի արհեստանոցը: Դպրոցի

դասերից հետո արհեստանոցում կտրում, հղկում, սոսնձում ու կառուցում ելին: Նրանք աշխատում ելին հիշողությամբ: Այն խաղալիքը, վորին Որվիլը թուշող մուկ եր պատկերացնում, այլևս չկար, բայց նրանք չելին մոռացել նրա կառուցվածքը, չափսերը և նյութը: Յեղբայրների նոր կառուցած թուշող մուկը պատրաստ եր, և նրանք փորձեցին այն թուցնել: Նա թուավ ավելի ուժեղ և լերկար ժամանակ, քան իրենց խաղալիքը՝ լերկու տարի առաջ: Փորձի հաջողությունը խիստ վողևորեց ցեղբայրներին, մանավանդ Որվիլին:

— Ի՞նչ ես կարծում, Վիլբուր, յեթե մենք ծավալով լերկու անգամ խոշոր թուշող մուկ սարքենք, ապա նրանից շատ ավելի խոշորը, և հետզհետե ավելի խոշորը, մենք չենք կարողանա նրանով ինքներս թուշել:

Վիլբուրը մտածում եր՝ չվստահանալով անմիջապես դրական պատասխան տալ: Որվիլը շարունակում եր համոզել նրան.

— Մենք նույն գծազրությամբ, բայց ավելի խոշոր թեկերով, մի նոր խոշոր մուկ կսարքենք: Սակայն թղթի փոխարեն կվերցնենք թեթև սպիտակ կտոր, ռետինե ավելի հաստ թել, այդ դեպքում մեքենան ավելի ուժեղ կլինի և մեզ ել կթուցնի:

— Իսկ ո՞վ կպտտի պրոպելլերը, — հարցրեց Վիլբուրը:


— Բայց մի՞թե այդ դժվար ե. լերը դու կթուշես, յես կպտտեմ, իսկ իմ թուշելու ժամանակ՝ դու, և վերջապես հայրիկն ու մայրիկը մեզ ուրախությամբ կոգնեն:

Սյուզան Բեռնեյնն այդպիսի խնդիրներում ավելի մտերիմ եր լերեխաների հետ:

Վիլբուրը, վոր մինչև այդ լսում եր փոքրիկ լեղբորը, ասաց մեծի լրջությամբ.

— Յես մտածում եմ այնպես անել, վոր մեքենան ինքը պտտի պրոպելլերը:

Որվիլի կապույտ, ժպտուն աչքերը, վոր մինչ այդ փայլում էլին նոր մտքի վողկորությամբ, Վիլբուրի առաջարկից հետո մռայլեցին ու լրջացան:



Շարլ Գյուրանի պատկերիկը (1840 թ.)


— Գիտե՞ս, Որվիլ, նախ քան թռչող մեքենան կառուցելը, անհրաժեշտ է, վոր մենք կարողանանք ու հասկանանք այն բոլորը, ինչ վերաբերում է թռիչքին: Այ, որինակ, չես չգիտե՞մ՝ ինչն է պատճառը, վոր թռչունը, չնայած ծանր է ոգից, վայր չի ընկնում ու թռչում է ոդում: Շառլ Գյուրանն իր թռիչքը կատարել է ոգապարիկով, իսկ ոգապարիկը, վոր գաղով լցված պարկ է, միշտ թեթև է ոգից: Հիշում ես մեր թռչող մուկը. չես հարցրել հալբիկին թռիչքի պատճառը, բայց նա չիմացավ: Իսկ չե՞ վոր թռչող մուկն էլ ծանր է

ողից՝ ինչպես թռչունը:

— Յեթե մենք սարքենք նոր թռչող մուկ, կառուցման ընթացքում կհասկանանք նաև թռիչքի գաղտնիքը, — շարունակեց համոզել Որվիլը:

Յեղբայրները վորոշեցին կարճ ժամանակամիջոցում պատրաստել մի նոր թռչող մուկ, չերկու անգամ խոշոր: Բայց տարրորինակ դամ խոշոր: Բայց տարրորինակ բան, նոր մեքենան չարդարացրեց մանուկների հույսը. նա ցատկեց մորեխի պես և ուժեղ խփվեց գետնին:

— Կառուցել այնքան խոշորը, վորով հնարավոր լինի



Նոր տեսակի բոչոլ մուկը

թռչել, միանգամայն անհույս բան է, — վճռականորեն ասաց Վիլբուրը:

— Արի վերակառուցենք, այն ժամանակ կգտնենք սխալը:

Յեղբայրները համբերությամբ շարունակեցին վերակառուցել: Շրջանակը թեթևացրին, ավելացրին թևերը, վերցրին ռետինե ավելի հաստ թել, բայց հելիկոպտերը կրկին հրաժարվեց թռչել: Հետևանքն անհաշող եր: Որվիլը, Վիլբուրը չհասկացան սխալը: Հայրիկն ու մայրիկը նույնպես չհասկացան: Վերջապես չեկան այն չեղրակացության, վոր չարժե ժամանակ վատնել այնպիսի մեքենայի կառուցման վրա, ինչպես հելիկոպտերն է:

Այդ ժամանակներում թռչող ոգից ծանր մեքենաները շինված էլին խաղալիքի ձևով, պատահական փորձի հիման վրա: Հիսունմեկ տարի առաջ՝ թռչող մուկն ալդպիսի մի պատահական փորձի արդյունք եր: Պատահաբար գնելով թանկարժեք խաղալիքը՝ Միլտոն Ռայտը լերբեք չեւ մտածում, վոր հետագայում այդ խաղալիքը հիմք կդառնա իր գավակներին՝ թռիչքի գաղտնիքները հասկանալու, ինչպես և առիթ կհանդիսանա թռչող մեքենա հնարելու:

Միլտոն Ռայտն աշխատանքի պատճառով հաճախ եր տեղափոխվում: Սեղաբ Ռայտի դիցնա իր ընտանիքը կըր-



Որվիլը և Վիլբուրը կառուցեցին մի նոր, յեղիւ անգամ խոշոր բոչոլ մուկ

2 թռչող մուկը

կին տեղափոխել եր Դեարույիդ*) քաղաքը, վոր մի քանի տարի առաջ նրանց բնակավայրն եր: Այստեղ Վիլլուրն ու Որվիլն ավելի մտերմացան իրենց նախկին հարևանի



Վիլլուրն յեկ Որվիլը հերթով բացնում են բոլոր մուկը

փրոռանի թեւերից բռնած՝ քամու ուղղութեամբ վազում ելին դաշտի վողջ չերկարութեամբ: Նրանք չերբեմն միմյանց հեռագրեր ելին ուղարկում: Յուրաքանչյուրը վերց-

*) Դեարույիդը Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքներից մեկն է:



Որվիլը, Վիլլուրն յեկ եղ Սայնեսը բացնում են փրոռանը


նում եր քառակուսի գունավոր թուղթ, վրան գրում իր ուզած միտքը: Գունավոր թուղթը միացնում ելին փրոռանի պոչին: Քամին խլում եր թուղթը և բարձրացնելով քշում եր հեռուն, վորի պայմանական գույնը փրոռանից շուտ եր տեղ հասնում, հաղթանակը նա եր տանում: Հեռաշուտ եր տեղ հասնում եր առաջարկ՝ չերբ և ինչ խաղալու կամ սւր գնալու:

Այսպես, մի անգամ Որվիլը հեռագրել եր հետեւյալը. «Առաջարկում եմ հնարել աչնպիսի մի փրոռան, վորի խոշոր տեսակը թոցնի մարդկանց»:

— Այդ խիստ հետաքրքրական է, — համաձայնեցին չերբով միաժամանակ:

— Կեցցե Որվիլը, — բացականչեցին Ջիմը և Վիլլուրը: Յերկուսով Որվիլին բարձրացրին թեւերի վրա ու ձոճեցին: Ջիմը փրոռանը սովորականից ել վատ պատրաստեց, նա բոլորովին չբարձրացավ:

Որվիլը և Վիլբուրը կատակով սրընթաց փրոռան անվանեցին, իսկ լեղբայրները պատրաստեցին արկղաձև, միջանցքավոր մի փրոռան: Նրանք կարծում էին, վոր



Արկղաձև փրոռանը

Սյա անգամ անհաջող փորձը լեղբայրներին խիստ եր ճընշում: Նրանք աշխատում էին վորքան հնարավոր ե շուտ հասկանալ այն ամենը, ինչ վերաբերում ե թռչելուն:

Ամառվա որերից մեկն եր: Քամի չկար: Արևի շողերը թափանցում էին նուշխիսկ սաղարթախիտ ծառերի մեջ: Ծառերի տակ գոյացել էին հատ ու կտոր ստվերներ:

Որվիլն ու Վիլբուրը ստվերում նստած՝ կարդում էին գիտնական Մերեյի ուսումնասիրությունը թռչունների մասին: Ահա մի սարյակ ծլվլալով թռչկոտում եր ծառից-ծառ և արևի վառ շողերի տակ լերբեմն չարաճճի պտուկտներ գործում՝ ճանճ ու մծեղ վորսալով: Այդ ժամանակ անցավ նաև մի բազե՝ գաղտագողի, առանց թեվերը թափահարելու, մեղմիկ սավառնելով: Գետնի վրա նկարվեց բազեյի ստվերը:

Յեղբայրները շտապ ցատկեցին նստած տեղերից: Նրանք աչքերին ձեռքով ստվեր արած՝ հետևում էին բազեյի թռիչքին: Բազեն լերկու անգամ շրջանաձև սավառնեց: Սյա անգամ սլացավ վեր՝ թևերն ուժգին թափահարելով:

— Յերբ նայում ես թռչուններին, թվում ե, թե շատ

հասարակ բան ե թռչելը... Կարծես նրանք միայն թափահարում են թևերը, և ուրիշ վոչինչ:

Վիլբուրի այս իմաստուն խոսքերից հետո, Որվիլը վրա բերեց.

— Մեզ հետաքրքրում ե միայն թռչունների թռիչքը, բայց նայիր թիթեռնիկներին՝ վորքան կայտառ են թափահարում իրենց թևերը. նրանք ինձ հիշեցնում են մեր հելիկոպտերը:

— Դու շատ ճիշտ նկատեցիր, Որվիլ. թիթեռը թափահարում ե իր թեվերը՝ ողի մեջ շարժում առաջացնելով, իսկ ողի շարժումն իր հերթին թիթեռը թռչում ե թեթեռժանդակ ուժ ե առաջացնում: Թիթեռը թռչում ե թեթեվացած, իսկ այդ բոլորը նա կատարում ե բնագոյրեն: Մեր հելիկոպտերը թռչում եր պրոպելլերի և թևերի առաջացրած ուժով. այդ իսկ պատճառով նա նման ե թիթեռնիկի:



Ռայս յեղբայրներ հետևում են բազեյի թռիչքին


* *

Ռայսերի բնակարանը Դետրոյիտի արևմտյան ծայրամասում եր: Քաղաքի այդ մասը կոչվում ե Գատուն— Ստրիտ: Քաղաքը ձգվում ե Ոհայո գետի լերկարությամբ, ուր Միսիսիպի գետը խառնվում ե Ոհայոյին:

Ողբ խաղաղ եր. չեր զգացվում անգամ ամենաթույլ

զեփուռը: Փըռոսներ թռցնելու վոչ մի հնարավորութիւն չկար: Կապուտակ, վճիռ չերկնքով թռչում էլին արագաթռիչ ծիծեռնակները: Ազոալներ չերամն անախորժ կոկոռցով անցնում եր մեկ ծառից մյուսը:

Այդ ժամանակ Ռայտ չեղբայրները, վորսացանցը ձեռներին, շրջում էլին մարգագետիններում:



Ռայտ չեղբայրները շարունակում են իրենց փորձեր

— Շատ հետաքրքիր է ծիծեռնակների չերկճուղ պոչը: Այդ անշուշտ ունի իր դերը՝ ողի գիմադրութիւնը հաղթահարելու համար — նկատեց Որվիլը, չերը նայում եր ծիծեռնակներին:

Նա կարտոֆիլի ծաղիկների վրայից մի թիթեռ բռնեց, նաև մի մոծակ, վորը տոթից սավառնում եր արեւածաղիկների շուրջը: Մոծակի դալար ասեղնաձև մարմինը թելով կապեցին ու տուփի մեջ դրին: Որվիլն ու Վիլբուրը շարունակեցին թիթեռներ փնտռել և աննկատելի կերպով հասան հնձած արտերին: Այստեղ մորեխները տոթից վրդեռոված, ցատկում էլին ծղնոտից ծղնոտ ու սվավացնում: Վիլբուրը ձեռքով վորսաց դեղին, փայլուն փորով մի մորեխ, ծղնոտի մի ցողիկ դրեց մորեխի բերանը և հրձվանքով ասաց.

— Ի՜նչ հպարտ ե, ծխամորձ ե քաշում...

— Շատ հետաքրքիր են այսորվա մեր վորսածները, մինչև իսկ արժե որագրում գրել, — առաջարկեց Որվիլը:

— Մոծակը չերկարատե է թռչում և ուժեղ, իսկ մորեխը հաղիվ միայն վալրկաններով ե ցատկոտում:

— Այդ ճիշտ նկատեցիր, Որվիլ, մորեխի թևերը չափազանց թույլ են՝ այդքան ծանր մարմնի համար, իսկ մոծակի չերկու գույգ թափանցիկ թևերն այնպես են հավասարակշռում նրա ասեղնաձև մարմինը, վոր նա սավառնում ե թե արագ և թե չերկարատե:

Ահա թե ինչո՞ւ մեր պատրաստած խոշոր թռչող մուկը մորեխի նման ցատկեց...

Շատ ուշ միայն չեղբայրները հասկացան, վոր չերկու անգամ խոշոր թռչող մուկին անհրաժեշտ եր տալ ութ անգամ ավելի շարժիչ ուժ:

Մանուկները մեծացան: Վիլբուրն ավարտել եր բարձրը խմբերի չեռամյա դասընթացները, իսկ Որվիլը մեկ տարի ևս պետք ե սովորեր միջնակարգ դպրոցում: Այդ ժամանակները չեղբայրները դպրոցում զբաղվում էլին ժամանակները չեղբայրները դպրոցում զբաղվում էլին սպորտով: Հատկապես Վիլբուրը շատ եր սիրում խաղալ վոլեյբոլ, բեսբոլ և խոկեյ: Խոկեյ խաղը պահանջում եր սառցի վրա լինել տոկուն և արագավազ: Այդ իսկ պատճառով Որվիլը, վոր ավելի թույլ կաղմվածք ունեւ, խուսափում եր խոկեյ*) խաղալուց:

Վիլբուրը հաճախ եր խաղում: Մեկ անգամ խոկեյ խաղալու ժամանակ հակառակորդ բանակի խաղընկերներից մեկը փայտով խփում եր գնդակին, չերը Վիլբուրը սալթաքեց սառցի վրա. փայտի ուժեղ հարվածը հասավ Վիլբուրի ծնոտին: Նա ուշաթափվեց. նրա վերին շրթունքը պատռվել եր, մի քանի ատամ ել փշրվել: Շտապ ոգնուլ թյուն հրավիրեցին: Բայց չերը Վիլբուրն ուշքի յեկավ, նա հրաժարվեց ոգնուլթյունից:

— Ավելի լավ ե ինքս վոտքով գնամ, այլապես մայրիկը խիստ կվախենա:

*) Խոկեյ — խաղ սառցի վրա, չմուշքավազի ժամանակ փայտով հարվածում են թելից գործած գնդակին:



Խոկեյ խաղալիս

Այնուհետև Վիրբուրը չորս տարի շարունակ տանը փակված մնաց՝ նյարդային հիվանդությամբ։ Թոփշքի և թռչելու մասին չերկար ժամանակ չեղբայրները լռեցին։

Վիրբուրը հազիվ եր առողջացել, չեր սկսեց տանն ինքնուրույն կերպով լրացնել ուսման պակասը։ Նա կարգում եր ու սովորում մեքենագիտության արվեստը և ողագնացության ասպարիզում կատարվող փորձերը։ Հենց այդ ժամանակ հիվանդանում է մայրը։ Վիրբուրը, վոր միշտ տանն եր, խնամում եր մորը մեծ հոգատարությամբ։ 1889 թ. ամռանը մայրը մահանում է։

Մորից այդպես վաղաժամ զրկվելը պատճառ դարձավ, վոր չեղբայրներն ողագնացությունն ուսումնասիրելու գործը միանգամայն դադարեցնեն։

*
* *

Վիրբուրի հիվանդության ընթացքում Ուրվիլն ավելի սերտ կերպով է մտերմանում Ջիմ Սայնեսի հետ։ Նրանք միասին հետաքրքրվում են գծագրական գործով և այնքան են փորձվում, վոր ձեռնարկում են ինքնուրույն տպարան...

— Առանց մեքենայի հնարավոր չէ տպագրել, — բացականչեց Ուրվիլը բարկությամբ։

— Իսկ վոթրեդից ձեռք բերենք մեքենա։

— Շատ հասարակ ձևով, — մենք ինքներս կշինենք։

Անցավ մեկ ամիս։ Ուրվիլը հնարեց ինքնուրույն տպագրական մեքենա։ Չնայած նա նման չեր իսկական մեքենայի, բայց զարմանալի լավ եր տպագրում՝ խիստ աղմկելով։ Վիրբուրն այդ ժամանակներն առողջանում է և մասնակցում տպագրական գործին։

— Գիտես, Ուրվիլ, մեքենան լավ ես սարքել, բայց այ, այստեղ (ցույց տալով գլանը) անհրաժեշտ է ավելացնել մի լծակ։ Այն ժամանակ դու հանդիստ կկանգնես և մեկ ձեռքով, լծակի ողնությամբ, կշարժես գլանը լետ ու առաջ։ Ուրվիլը համաձայնվեց և իրոք մեքենան սկսեց ավելի հեշտ, կրկնակի արագությամբ աշխատել։

— Դուք ինձ հաղթեցիք, — ասաց Դեարոյիզի գլխավոր տպագրիչը։ — Ձեր մեքենան շատ ավելի լավ է աշխատում, քան մեր մեքենաները։

Այդ ժամանակ Ուրվիլը 16 տարեկան եր։


Տպագրական աշխատանքը կարճ ժամանակից հետո ձանձրացրեց Վիրբուրին։ Նա առաջարկեց յեղբորը թողնել այդ ես, սկսել հեծանիվներ սարքել։ Յեղբայրները զարմանալի կերպով միաձայն վորոշում ու կատարում էլին։ Նրանք սկզբում հեծանիվ սարքեցին իրենց համար ինչ-վոր չերկու հին անիվներից։

Նոր հնարագիտությունը հարևաններին զարմանք պատճառեց։

— Տեսեք Ռայտի մանուկներին՝ իրենց կառուցած հեծանվով, — ասում եր ամբոխը զարմացած։ Իսկ այդ ժամանակ Ռայտ չեղբայրները տասներեք տարեկան չերիտասարդներ էլին։ Այդ որվանից չեղբայրներն սկսում են զբաղվել հեծանվի սպորտով, մասնակցում են մրցանակների։


Այնուհետև Որվիլը և Վիլբուրը ձեռնարկում են հեծանվի արհեստանոց հիմնել՝ թողնելով տպարանը Զիմ Սայնեսին:

Զնայած նոր սկսած գործով լեղբայրները շատ ելին զբաղված, այնուամենայնիվ նրանք ժամանակ ելին գտնում կարդալու... Քանի վոր նրանց հաջողվեց կոլեջում սովորելու... լեղբայրներն ուսման բացը լրացնում ելին ինքնուրույն կերպով. նրանք աշակուղջ կերպով հետևում ելին ողագնացների փորձերին, վոր 1890 թվականներին տենդորեն տարածվում եր Ամերիկայում: Բոլոր չեղած փորձերը գրեթե մեծ մասամբ անհաջող ելին անցնում: Անգլիացի գիտնական Սալլեմ Մաքսիմը չերկար ժամանակ կառուցեց իր չորս տոնն ծանրութուն ունեցող ողանա-




Անգլիացի գիտնական Կայլեմ Մաքսիմի չորս տոնն ծանրութուն ունեցող մեքենան

վր: Ամերիկյան հույս ուներ, վոր Սալլեմ Մաքսիմը մեքենան անպայման կկատարի իր վրա գրված պարտականությունը: Բայց Մաքսիմն ինքը հիասթափվեց հենց առաջին թռիչքից հետո, չերթ թանգարտեք մեքենան շախշախվեց: Ֆրանսացի Ոկտավ Շանյուտը, վոր ապրում եր Չիկագոյում, հնարեց մի շարք չերկթև մեքենաներ, կատարեց յոթ հարյուրից ավելի թռիչքներ, կաղմեց բազմաթիվ ցուցակներ ոգի ճնշման մասին, զրեց մի շարք



Ֆրանսացի Ոկտավ Շանյուտը չերկթել սավառակով բռնելիս


զրբեր իր ուսումնասիրութունների վերաբերյալ: Բայց նա 1896 թվականներին դադարեց փորձեր կատարելուց՝ նվիրվելով զուտ գիտական աշխատանքներին: Ադերը, նույննարեց չղջկաթև մեքենան՝ չերկու աղացային պրոպելլերով: Նրանով թռավ 17 մետր բարձրությամբ 300 մետր տարածութուն. 2-րդ թռիչքից հետո Ադերը թողեց ողագնացության փորձը, չերթ մեքենան շարգվեց:



Ֆրանսացի Ադերի չղջկաթեվ մեքենան

Մի անգամ տեղական լրագրում գրված եր գերմանական ինժեներ Ոտտո Լիլենտալի մահվան մասին: Լիլենտալը թռել ե թռչունի թևերով, բայց հաշիլ չե առնված, վոր հինգ տարում Լիլենտալը ոգում չեղել ե ընդամենը հինգ ժամ, չնայած հազարից ավելի թռիչք ե կատարել: Նրա յուրաքանչյուր թռիչքն ընդամենը մի քանի վայրկյան ե, տևել: Ողագնացության պատմության մեջ Լիլենտալն ե, վոր ամենից շատ աշխատել ե նմանվել թռչունին: Նրա սավառակն ունեցել ե թռչունի չերկու գույգ հսկա թևեր

ու պոչ: Այդ թևերն ու պոչը Լիլենտալն ամրացրել է իր
 ուսերին. տասներկու քառակուսի մետր մակարդակ ու-
 նեցող թևերը թափահարել է իր թևերով: Բլուրների ուղ-
 դածիգ գագաթներից Լիլենտալը թռչում էր ցած, քա-
 մուռ ուղղութիւնով, տասնյակ մետր բարձրութիւնից: Նա
 յերկարատև ուսումնասիրել է թռչունների թռիչքը: Ու-



Լիլենտալը քոչում է նստալ քոչունի քեվերով

սումնասիրել է նաև ոգի շարժումը տարբեր լեղանակ-
 ներին: Նրա հնարած փրոուանները քամու և ոգի ճնշ-
 ման վերաբերյալ կարևոր խնդիրներ են հայտնաբերել:
 1896 թվին թռիչքներից մեկի ժամանակ տասն և
 հինգ մետր բարձրութիւնից Լիլենտալը վայր է ընկնում
 և ջախջախւում:

Վիլբուրը կարդաց Որվիլին Լիլենտալի մահը:

— Այս ինձ հիշեցնում էր մեր փրոուանները: Բայց
 վոչ մի անգամ մենք չփորձեցինք, թե փրոուանները կա-
 ռող են արդյոք մարդկանց թռցնել:

— Այդպիսի փրոուանները մարդկանց չեն թռցնում,

ինչպես նաև մեր արկղածե փրոուանները, — վճռական
 տոնով պատասխանեց Վիլբուրը:


— Բայց տես, վոր Լիլենտալի կառուցած փրոուանը
 կարողացել են թռցնել: Ա՛խ, թե կիմանայի՜ ինչպես ելին
 նրանք կառուցված... Յեղբայրները մի վայրկյան նայեցին
 նախ: Արի փորձենք, — ասացին նրանք միաժամա-
 միմյանց: — Արի փորձենք, — ասացին նրանք միաժամա-
 նախ: Առաջին անգամ յեղբայրներն այդքան լուրջ կերպով
 հետաքրքրվեցին ողապնացութեամբ, չէր վաղուց արդեն
 մոռացել ելին թռչող մուկը, փրոուան խաղալը և թռո-
 չուններին ուսումնասիրելը:

Առաջին անգամ նրանց մեջ արթնացավ թռիչքի մեծ
 տենչանքը: Լիլենտալի մահն առիթ դարձավ համառ կեր-
 պով վերսկսելու ողապնացութեան ուսումնասիրութիւնը:
 պով վերսկսելու ողապնացութեան ուսումնասիրութիւնը:
 Սյդ ճիշտ այն ժամանակն էր, չէր շատ շատերը Լիլեն-
 տալի մահից հետո դադարեցին թռիչքի մասին մտածել:
 Միայն Պիլչերը համառ կերպով շարունակեց Լիլենտալի
 պես փորձեր անել թռչունի թևերով: Նա ևս ջախջախւեց՝
 Թողնելով միայն իր մշակած ոգի ճնշման ցուցակը: Թե
 Լիլենտալը և թե Պիլչերը նոր ելին սկսել շարժիչ ուժի
 և շարժիչ մեքենայի խնդրով զբաղվել, չէր ջախջախ-
 վեցին:

Ամերիկացի գիտնական Լենգլին գաղտնի կատարում
 էր գիտական աշխատանքներ. նա հիասթափվեց չերկար
 տարիների իր փորձից, չէր նրա չերկթև սավառնակը
 թաղվեց ջրում:

Լենգլին այդ պարտութիւնից չերկու տարի հետո
 մահացավ:

Ողապնացութիւնն սպասում էր խիզախ ու խելացի
 մարդկանց... Յերկու յեղբայրները, Լիլենտալի մահից
 չորս տարի հետո միայն, առաջին անգամ թռան իրենց
 կառուցած սավառնակով: Իսկ չորս տարվա ընթացքում
 նրանք համառ կերպով ուսումնասիրեցին բոլոր լե-
 դած ողապնացներին, նրանց ոգի ճնշման ցուցակները...



Ամերիկացի պրոֆեսոր Լենգլիի ոդանավը


չկար մի լերեկո, վոր նրանք չհիշելին Լիլենտալին, Շանյուտին, Ադերին, կամ Խալեմ Մաքսիմին և ուրիշներին: Այդ որվանից նրանք կրկին վերադարձան թռչուններն ուսումնասիրելու գործին. նրանք ուսումնասիրեցին քամու և հոսանքները: Նրանք գտան ու լուծեցին մի շարք անհայտ ու կարևոր խնդիրներ:

* *

Մի անգամ Վիլբուրը հեծանվի արհեստանոցում պատահաբար գետնից բարձրացրեց մի դատարկ թղթե արկղ: Նա ձեռքի մեջ մտադբաղ ծռմուկ կողմերը: Արկղի լերկարավուն կողմերը հիշեցրին Շանյուտի լերկթև սավառնակը, վորն ավելի հաջող եր բոլոր լեղած սավառնակներից: Այստեղ Վիլբուրի գլխում մի նոր միտք ծագեց...

— Յեթե սավառնակի թևերի ծայրերն այս արկղի պես ծռենք, այդ դեպքում հնարավոր ե լուծել լայնական հավասարակշռության խնդիրը: Այն ժամանակ կարելի լե ասիլալել, վոր քամին ճնշի թևերի այս կամ այն մասը, ըստ թռչողի ցանկության: Այդ լերեկո Ուրվիլը մտավ արհեստանոց և տեսավ, վոր Վիլբուրը գծագրում ե մի սավառնակ, վորի թևերը կարելի լե ըստ պահանջի կորացնել: Այդ լերեկո Ռայտ լեղբայրները լուծեցին ողագնա-

ցության համար շատ կարևոր նշանակութուն ունեցող մի դաղտնիք, վոր մինչև այդ վոչ մի ողագնաց չեր լուծել: Յերկայնական հավասարակշռութունը պահելու համար նրանք մտածեցին լերկու տեսակի դեկ պահել — բարձրացնող դեկ և առաջ մղիչ դեկ:




Ռայտ լեղբայրների սավառնակը՝ ծովող քեվերով

— Դու և այժմ հասկանում ես՝ մենք ինչ վտանգից ենք սղատվել, — ասաց գոհունակութամբ Վիլբուրը: — Սավառնակին պետք ե լայնական հավասարակշռութուն, վորպեսզի մեքենայի թևերը պահվեն անփոփոխ, նույն հավասարությամբ: Իսկ լերկայնական հավասարակշռութունը պահպանվում ե, լերբ ողանավի քիթը և պոչը գտնվում են միատեսակ ուղղությամբ: Այս դեպքում վոչ պոչն ե բարձրանում և վոչ քիթը ցած իջնում: Մինչդեռ ողագնացներից շատերն այս լերկու հավասարակշռութունները պարզելու համար, պետք ե ծանրության կենտրոնը պահելին անփոփոխ: Այդ իսկ պատճառով նրանք թռչող մեքենայի կենտրոնից ծանրոց են կախել: Իսկ ծանրոցն ողապարիկի կողովի պես միշտ լենթակա լե ուժեղ տատանման: Թե Ուտտո Լիլենտալը լեվ թե Շանյուտը թռիչքի ընթացքում ծանրության կենտրոնն անփոփոխ պահելու համար իրենց մարմինը փոփոխում ելին այս կամ այն կողմը, ըստ քամու հոսանքի: Իսկ այդ պահանջում եր մեծ զգուշութուն և փորձառութուն:

Բրիտանական ողագնացների ընկերությունն ամենա-
լավ նկարագրություններն է մեկուսի գրված ե.

Իհնչպես ե կտրվում հողից մեծ ծանր թռչունը՝ ողբ
բարձրանալիս...

Յերբ մոտեցանք թռչունների արքային ութսուն
մետր հեռավորության վրա, նա զգաստացավ, քիչ բացեց
թևերը, բայց չչարժվեց իր տեղից: Յերբ մենք ավելի
մոտեցանք, արծիվը հեռացավ մեզնից անշարժ թևերով:
Յերբ կրակոց լսեց, արծիվը սուրաց դանդաղ թափա-
հարելով թևերը. արագություն ձեռք բերելու համար մի




Արծիվը բռնելիս

առժամանակ նա սահեց գետնի վրայով, բարձրացավ հե-
տը գհետե թեք գծով, ապա վեհորեն սուրաց դեպի իր բունը,
վոր լոթը կիլոմետր հեռու չեր իր բարձրացած տեղից...
Մենք ուսումնասիրեցինք նրա հետքը: Յերբ նա թեթե.
վացրեց իր մարմինը, ավելացրեց արագությունը թևերի
ոգնությունը: Նա թողել եր չանկոռտված հետքեր, վորից
իմացվեց, վոր արծիվը սուրացել ե քսան մետր տարածու-
թյուն, նախքան հողից կտրվելը... Այս մասին կարդա-
լուց հետո Որվիլն ասաց.

— Թռչունն իսկական ողանավ ե. չերբ մենք կառու-
ցենք մեր ողանավը, անհրաժեշտ ե նկատի ունենալ ար-

ծվի բարձրանալը, նրա հողից կտրվելու որենքը... Յեվ
իսկապես, այդ չերեկոյան մտածեցին նաև սավառնակի
հողից կտրվելու մասին, բայց նրանք հատուկ ու վճռական
չեղրակացություն չեկան, չերբ հնարեցին առաջին սա-
վառնակը: Ռայտ չեղբայրների առաջին ողանավը, հողից
կտրվելիս, վազում եր անիվների վրա բավական չերկար



Ռայտ չեղբայրների ողանավը վազում եր անիվների վրա, ապա բարձրանում
արծվի պես

տարածություն, ապա թեք գծով բարձրանում, ճիշտ արծ-
վի պես:

Լիլենտալի փորձն որինակ եր՝ կրկնակի զգուշ լի-
նելու: Յեղբայրները վոչինչ չեյին անում, չերբ վստահ
չեյին իրենց ուժերին. նրանք նորից սկսեցին մանրա-
կրկիտ ուսումնասիրել թռչունների թռիչքը: Հաճախ ան-
ցորդները քմծիծաղ տալով գլուխները թափահարում եյին,
չերբ տեսնում եյին հասունացած չեղբայրներին արհեստա-
նոցի պատուհանում նստած՝ սավառնող բազելին, կամ
ծիծեռնակներին տեսնելիս:

— Թռչունները վազուց սովորել եյին հավասարակշ-
ռությունը պահպանելու արվեստը... Նրանք ողի հոսանք-
ներից թե ոգտվում են և թե կռվում նրանց դեմ:— Ախ,
եթե մեզ հաջողվեր թռչունի պես սլանալ ողում...—ա-
սաց Որվիլը՝ նախանձելով բազելի ծուլ պտույտներին:

— Յեթե թռչունի թռիչքի գաղտնիքի մի չնչին մասը մարդը կարողանար հասկանալ, անշուշտ նա կհասներ թռչունին:

Յեղբայրներն ուսումնասիրում էին քամու հոսանքները: Նրանք նստում էին բաց դաշտում, փոթորկի ժամին, լերկար նայում էին քամու պտույտներին ու գրի առնում:

— Յերբ ուժեղ մրրիկը գետնին մոտիկ է, նա շատ ավելի վտանգավոր է քան Նիագարայի ջրվեժը, — բացականչեց Որվիլը, լերբ նրան հանդիպեց մի անոնի փոշու սյուն:

— Ճիշտ է, — կարճ պատասխանեց Վիլբուրը: — Այդ նշանակում է, վոր պետք է մանրակրկիտ ուսումնասիրենք քամու որենքը...

Յեղբայրները նկատել էին, վոր ողի հոսանքները մեծ մասամբ անցնում են բլուրների թեքութամբ: Իմացան, վոր այդ հոսանքները միշտ նույնը չեն: Յուրաքանչյուր լեռնակույտ, ծառերի թփերի խումբ ուղարկում է իր ալիքը: Իսկ ալիքները հոսում են գալարվող զանգվածներով, վորոնք հաճախ ձգվում են հարյուրավոր մետրեր: Սաղաղ գետի միայլար ալիքները փրփրում են ու դիզվում, լերբ հանդիպում են ողի ալիքավոր հոսանքի կամ ուժեղ քամու:

— Մեզ անհրաժեշտ է իմանալ, թե ինչպիսի քամու ժամանակ ինչ կարող է պատահել ողանավում նստած մարդուն... — ասաց Վիլբուրը, լերբ Որվիլը կարդում եր քամու մասին գրի առած ցուցակը: — Յեթե մենք մշտապես նստում ենք քաղաքից դուրս, դաշտերում, ծառերի տակ, դիտում ենք միայն թռչունների թռիչքը կամ քամու հոսանքները, դրանով մենք փնտռում ենք անվտանգութուն և լերևակայական թռիչք: Իսկ յեթե մեզ անհրաժեշտ է ուսումնասիրել մեքենան, ապա ուրեմն պետք է նստել

այդ մեքենան և թռիչքի փորձ կատարել: Այսպես վորոշեցին յեղբայրները միաժամանակ: Չորս տարվա լրջմիտ ուսումնասիրությունից հետո, Որվիլը և Վիլբուրը սկսեցին գծադրել առաջին սավառնակը՝ կառուցելու համար: Այս անգամ նրանց պետք եր քամի՝ միահավասար արագությամբ: Դետրոյիդի քամիները խիստ վտանգավոր էին առաջին փորձի համար: Այսպիսի քամի գտնելու համար նրանք գրեցին Միացյալ Նահանգների ողերևութաբանական բյուրոյին:

Կարճ ժամանակում պատասխան ստացան.

— Գնացեք Կիտտի-Սոուկ *) Հյուսիսային Կարոլինա**), Միսգատորս: Այնտեղ դուք կգտնեք ձեզ անհրաժեշտ քամին:

Գնալ Կիտտի Սոուկ — այդքան հեշտ չեր: Հյուսիսային Կարոլինան շատ հեռու չեր Դետրոյիդից. յեղբայրները լսել էին, վոր Միսգատորսում***) փոթորիկը հսկայական նավեր է խորտակում:

— Մենք չորս տարի սովորեցինք, վորպեսզի հնարավորություն ունենանք ողը բարձրանալու, — ասաց Որվիլը վողեվորությամբ: — Այժմ յես կարծում եմ՝ մեզ վոչինչ չի խանգարում գնալ Կիտտի Սոուկ:

— Այդ իսկ պատճառով ինքս կգնամ, իսկ դու առայժմ կողենս Կետին և հալըրիկին, — վճռականորեն ասաց Վիլբուրը:

* *

1890 թ. սեպտեմբերի մեկին Վիլբուրը Դետրոյիդից մեկնեց դեպի Կիտտի Սոուկ: Նա վերցրեց իր հետ բոլոր

*) Կիտտի Սոուկը կայան է Ատլանտյան ովկիանոսի ափին:

**) Հյուսիսային Կարոլինան քաղաք է Գատերաս թերակղզու մ:

***) Միսգատորս կամ Միսգատերաս — փոքրիկ թերակղզի յե Ատլանտյան ովկիանոսում:

անհրաժեշտ իրերը ճամբարի և սավառենակի կառուցման համար: Վիլբուրը ճանապարհվեց Նորֆոլկով*) Հյուսիսային Կարոլինա, Ատլանտյան օվկիանոսի ափին, Յելիսբեա Սիտ**)

քաղաքում կանգ առավ: Այստեղ նա չերկար փնտռեց ուղեկցող. Կիտտի Խոուկի ճանապարհը վոչ վոք չիմացավ: Վերջապես մի ծեր նավաստի — Իսրայել Պեռլին — հանձն առավ տանել Վիլբուրին իր առաքաստանավով:

Նրանք Յելիսբեա Սիտից մեկնեցին Պսկովիտանկ***) ճահճոտ գետով. անցան Արբելմալ****) նեղուցը: Այստեղ նեղուցում առաքաստանավը ընկավ ուժեղ փոթորկի մեջ:

— Յես այսքան տարի աշխատում եմ, առաջին անգամն ե, վոր պատահում եմ այսպիսի փոթորկի — գանգատվեց Իսրայել Պեռլ հուսահատ:

Ճանապարհորդները վերադարձան գետը և խաբիսիսը ձգեցին գետի մեջ, սպասեցին փոթորիկի դադարելուն: Վիլբուրն ամբողջ որվա ընթացքում առաջին անգամ հիշեց, վոր քաղցած ե: Ուշացում նա չեր նախատեսել և ուտելիք չեր վերցրել... Փոթորիկն ավելի սաստկացավ Սպասել այդ վիճակում գետի վրա, միանգամայն անհնարին եր: Ծերունի Պեռլ դժվարանում եր կովել կատաղի փոթորկի դեմ: Վիլբուրը լարեց իր ուժերը, թիավարելով հասան ափը: Այստեղ նա տեսավ, վոր առաքաստը և դեկը կորել են: Մինչև Կիտտի Խոուկի հասնելը մեկ շաբաթ տևեց:


Համատարած մի ավազուտ, վաթսուհն կիրոմետր տարածությամբ ձգվում եր Միսգատորսը: Այստեղ ավա-

*) Նորֆոլկը գտնվում ե Վաշինգտոնի նահանգում:

**) Յելիսբեա Սիտ քաղաքն Ատլանտյան օվկիանոսի ափին ե, Վաշինգտոնի նահանգում:

***) Պսկովիտանկը փոքրիկ ճահճոտ գետ ե. սկիզբն ե առնում Ալբերմալ նեղուցից:

****) Ալբերմալ նեղուցը Միսգատորսը բաժանում ե մայր ցամաքից և օվկիանոսից:



Վիլբուր փոթորկի ժամանակ քիավառելիս

զուտների վրա կային մի քանի ձկնորսական խրճիթներ, փրկարար կայան, փոստ և մթնոլորտաբանական կայան:

Ահա ամբողջ Կիտտի Խոուկը, վորին այնքան տենչում ելին լեղբայրները:

Ծովափնյա բարձրաբերձ ավազուտների վրա սավառնում ելին ձկնիկեր արծիվները, բազենները և ուրիշ շատ գիշակերներ: Վիլբուրը չերկար հոգնածությունից հետո պառկեց ավազի վրա: Նա նայեց սավառենող գիշակերներին չերկար ու չերկար:

— Այստեղ բավական հարմար ե, — մտածեց ինքն իրեն. մարդիկ շատ չկան, վոր խանգարեն: Թռչունները բազմաթիվ են ուսումնասիրելու համար:

Ավազների վրա բավական նպաստավոր եր մտքերի մեջ խորասուզվելու համար: Առատ մտապատկերները հաջորդեցին մեկը մյուսին: Նա պատկերացրեց իրենց կառուցած սավառենակը, Ուվիլին և իրեն՝ Թռչունի պես ավառենակի... նա հիշեց Ուվիլին և անհամբեր սպասում եր նրա գալու:



Վիլբուրը ավազների վրա պառկած դիտում է բուշուկների բռնիքը

Կիտտի խոռոկի պայծառները խիստ վրդակորեցին նրան. նա անմիջապես անցավ գործի. Ժամանակավոր կերպով տեղավորվեց փոստի պես Վիլիամ Տեյտի մոտ:

— Թույլ տվեք ձեր կարի մեքենայից ոգտվելու, — դիմեց Վիլբուրը Վիլիամ Տեյտի կնոջը:

— Մեծ ուրախությամբ, բայց ձեզ՝ տղամարդուն ինչի՞ չես պետք մեքենան: Կարելի կանացի գործ է, — շարունակեց միսիս Տեյտը. — ավելի լավ է՝ տվեք, յես ձեզ համար կկարենմ:

— Ո՛ր... վոչ, միսիս Տեյտ. այս այնպիսի մի կար է, վոր դուք՝ կանայքդ չեք կարող կարել: Ինձ անհրաժեշտ է կարել մի գույգ թևեր*): Միսիս Տեյտը կարծեց, թե հասարակ շապիկի թևեր է կարելու... Բայց նա իր աղջիկների հետ զարմանքով դիտում էր տարրորինակ չեկվորին, վորը թանկարժեք սպիտակ լերկար կտորները կտրտում էր ու կարում իրար:

Սեպտեմբերի քսանհինգին Որվիլը նույնպես Կիտտի խոռոկումն էր... Բավական հուզվիչ էր տեսնել չեղբայր-

*) Սավառնակի համար Վիլբուրը կարեց սպիտակ թանկարժեք կտորից թևեր՝ յուրաքանչյուրը չորս մետր յերկարությամբ:

ներին. վորպիսի ուրախությամբ հանդիպեցին: Բարեբախտաբար Որվիլի ճանապարհորդութունը տևել էր ընդամենը յերկու որ և առանց արկածների:

Նրանք անմիջապես անցան ճամբարի և պլանների կառուցմանը: Սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ը չեղբայրները կառուցում էին: Այս ամալի տեղում վոչ վոքի չհետաքրքրեց չեղբայրների սավառնակը: Մանավանդ չերեկոյան բոլորը քաշվում էին իրենց խրճիթները, ճիշտ այնպես, ինչպես Կիտտի խոռոկի թռչունները վերջալույսին մտնում էին իրենց բները:

— Ինչքան հարմար է այստեղ, վոչվոք մեզ չի խանգարում...

Յեղբայրները վերջին անգամ լսեցին սկսվող քամու խշշոցը ծառերի զազաթներից և պառկեցին քնելու:

*
* *

Հաջորդ որն Որվիլն ու Վիլբուրն առավոտը շուտ արթնացան: Կատաղի քամին մոլեգնում էր ճամբարի շուրջը:

— Այսօր մեր սավառնակը փորձելու վոչ մի հնարավորություն չկա:


Քամու արագությունը 45 կիլոմետր է, մինչդեռ մեզ անհրաժեշտ է 30 կիլոմետրից վոչ ավելի քամի: Յեղբայրները յերկար սպասում էին. քամին չմեղմացավ: Նրանց տանջում էր հետաքրքրությունը:

Յեղբայրները վերջին անգամ մանրակրկիտ նայեցին սավառնակին. չլինի՞ թե գիշերվա քամին փասած լինի. ստուգեցին, ամեն ինչ կարգին էր: Նրանց յերկուսի սիրտն էլ բաբախում էր մի անուշ հուզմունքով... Յեղբայրներն առաջին անգամ պետք է թռչեցին, առաջին անգամ պետք է ստուգեցին այն բոլոր դիտությունը, ինչ նրանք ձեռք էին բերել ինքնուրույն կերպով, — ճիշտ էր արդյոք նրանց

սովորածը, ճիշտ ելին կառուցել սավառնակը... Արդյո՞ք սպիտակ կտավե թռչունը կկատարի իրեն վրա դրված պարտականությունը: Յերկու լեղբայրների գլխում այս հարցը պտտվում էր միաժամանակ:

Լիլենտալի և Պիլչերի փորձը միշտ զգուշացնում էր նրանց — չշտապել, չսխալվել...

— Այժմ կտեսնենք, — ասաց Վիլբուրը: Նա պառկեց փորի վրա պլանների ցածի թևին, յերկու ձեռքով բռնեց մեքենայի դեկը, իսկ Ուիլիլը քանդեց թոկերը: Հսկայական պլաները թռավ այնպես, ինչպես իրենց փրոռանը, երբ խաղում ելին մանուկ հասակում:



Վիլբուր պառկեց պլանների ցածի քեվին յեվ ձեռքերով բռնեց դեկը

Այնուամենայնիվ պլաները չթռավ այնպես, ինչպես իրենք ելին կարծում: Նա կատարեց ուժեղ վայրեջքներ, թեքվեց աջ ու ձախ. մեկ ըոպելից ցած իջավ: Ինչ վոր սխալ կար, վոր պետք է ուղղելին: Նույն ուրը յեղբայրները մի քանի թռիչք կատարեցին. նրանք մի շարք սխալներ գտան:

Սավառնակը ճամբարից վեց կիլոմետր հեռու տեղափոխեցին: Այստեղ ավագե բլուրների թեքությունը սավառնակն այնքան տեղ քաշեցին, մինչև վոր քամու միջոցով ուժ առավ ու թեթևացած թռավ, ազատ սավառնեց յերկու ըոպե և հանգիստ՝ թռչունի պես իջավ: Վիլբուրը բլրից ցած իջավ և վագեց դեպի թռչող յեղբայրը:

— Նա թռչում է, — բացականչեց Վիլբուրը բերկրանքով:

— Այո, ինչպես թռչուն: Նկատեցի՞ր ինչպես ցած իջավ...

— Արի ելի փորձենք:

Յեղբայրները նույն ուրը փորձեցին ելի տասներկու թռիչք՝ յուրաքանչյուրը յերկու ըոպե տևողությամբ:

Այդ ուրը Ռայտ յեղբայրներն այնքան յերջանիկ ելին, վոր ողագնացություն պատմությունն այդ յերջանիկ յեղբայրներին հիշում է մեծ հուզմունքով:

Յեղբայրները լի վոգևորությունը ու բարձ ըտրամագրությունը պատրաստվեցին վերադառնալու Դեյտոն:

— Մենք հաջորդ տարին ելի կվերադառնանք, — խոստացան յեղբայրները Կիտտի Սոուկի ուղեկցող ընկերներին: — Դուք կտեսնեք նոր ու ավելի լավ մեքենա:

Դեյտոն վերադառնալով Ռայտ յեղբայրները սկսեցին մի նոր, յերկու անգամ մեծ սավառնակի նախագիծը: Առաջին սավառնակի գլխավոր սխալն այն էր, վոր շարժիչ ուժը շատ ավելի պակաս էր, քան անհրաժեշտ էր:

— Ուրիշ գյուտարարներ մեզ կասեն, վոր մենք անխելք ենք, այսքան մեծ սավառնակ ենք կառուցել... — տրտնջաց Վիլբուրը:

— Բայց ուրիշ գյուտարարներ չգիտեն, վոր մեր ղեկավարելու ձևը բոլորովին այլ է, — պատասխանեց Ուիլիլը: — Չե՞ վոր ուրիշները փորձում են պահպանել հավասարակշռությունը՝ դեկը յետ-առաջ շարժելով: Հետևապես վորքան խոշոր է մեքենան, այնքան դժվար է իսկ մեր մեքենայի կառուցվածքը միատեսակ է թե մեծի և թե փոքրի համար: Մեր ողանավի թևերի կորվող հարթությունները կորվում են համապատասխան ողանավի մեծություն, վորի շնորհիվ ապահովված են հարող և յերկայնաձև հավասարակշռությունը:

Առաջին սավառնակի թուիչքից հետո լեղբայրներն սկսեցին կասկածանքով նայել ողի բոլոր ցուցակներին, մանավանդ Ոստո Նիլենտալի ողի ճնշման ցուցակին, վորով ոգտվել էլին առաջին սավառնակը փորձարկելիս...

— Մեզ անհրաժեշտ է սեփական և ճիշտ՝ ողի ճնշման ցուցակ... — ասացին լեղբայրները միաժամանակ:

Շատ չանցավ, արհեստանոցում աշխատում էր քամի առաջացնող մի խողովակ, վորի մի գլուխը բաց էր, իսկ մյուս գլխում դրված էր մեքենան, վորը հնարավորութուն էր տալիս մեկ կիլոմետրից մինչև 45 կիլոմետր արագութեամբ քամու հոսանք ստանալու: Խողովակի ներսում թելերով կախված էլին 200-ից ավելի թղթի, մետաղի, ստվարաթղթի բազմաթիվ ձևերի, ծանրութեան, հաստութեան և մեծութեան շերտեր: Տարբեր ուժի հոսանքներում լեղբայրներն ուսումնասիրեցին բոլոր շերտերի վրա կատարած ողի ճնշման ցուցակը, կազմեցին ինքնուրույն մի ցուցակ: Այնուհետև լեղբայրները նորից վստահ կերպով Դեյտոնից Կիտտի Խոուկ մեկնեցին:

Այս անգամ լեղբայրները մենակ չեցին. նրանց միացավ Ոկտավ Շանյուտը Չիկագոյից, վորի հետ լեղբայրները համակրութեամբ բարեկամական կապ էլին պահում: Յեղած ողագնացներից ամենից շատ լեղբայրները հավանում էլին Շանյուտին՝ թե իբրև խելացի ողագնացի և թե անկեղծ խորհրդատու բարեկամի: Շանյուտի լերկթե սավառնակի ձևը մինչև իսկ լեղբայրներն ոգտագործեցին առաջին սավառնակը կառուցելիս: 1900 թվի հուլիսի 15-ին մեկնեցին Կիտտի Խոուկ, Հուլիսի 27-ին պատրաստ էր նոր մեքենան՝ լերկու անգամ խոշոր: Շարժիչ ուժն ըստ լեղբայրների հաշվեցուցակի՝ պետք է խոշոր լիներ: Բայց պակաս էր: Իսկ բարձրութուն և ուղղութուն տվող ղեկն աշխատում էր շատ ավելի վատ քան անհրաժեշտ էր: Վիլբուրը հուսահատվեց այս անհաջողու-

թյունից... իսկ Շանյուտը վոգևորվեց ասելով, վոր մեքենան լավ է կառուցած, միայն պետք է հասկանալ սխալը: Այսպիսի դեպքերում Որվիլը սրամիտ էր, վոգևորվող հարցասեր և խիստ աշխատասեր: Նա հաճախ առաջարկում էր այս կամ այն փայլուն միտքը, իսկ իրագործելիս նա միշտ լեղբոր ոգնութեան կարիքն էր զգում: Վիլբուրը լըջմիտ, գործնական և համառ էր կառուցելու ժամանակ: Յերջանիկ լեղբայրները լերկուն էլ հնարագետ էլին, միմյանց լսող և աշխատասեր:

— Յես կարծում եմ, վոր մենք ողի ճնշման կենտրոնը շատ մոտ ենք կառուցել սավառնակի վերջին մասին... — նկատեց Որվիլը:

Նրանք տեղափոխեցին ողի ճնշման կենտրոնը՝ համապատասխան պլաների*) կենտրոնական առանցքին, և այդ պատճառով սավառնորդի տեղը տեղափոխեցին լետնա պիտի լինել նստած վիճակում: Այս անգամ մեքենան թռավ անհավասար:

— Դե, այժմ ի՞նչպես է, — հարցրեց Վիլբուրը՝ թուիչքից իջնելով:

— Իհարկե թռչում է, բայց վոչ այնպես, ինչպես ծիծեռնակը, — նկատեց Որվիլը:

— Մենք այժմ ծիծեռնակին էլ կհասնենք, — ասաց Վիլբուրը՝ կրկին նստելով մեքենան:

Շատ քիչ էր բարձրացել, լերբ Որվիլը ճչաց հուզմունքով. — Ձգույշ, Վիլբուր, Վիլբուրը մի ակնթարթում կարողացավ զսպել մեքենայի վայրեջքի թուիչքը: Որվիլը գունատվեց վախից: Ձե վոր այսպիսի մի անգագույշ վայրկյանում ջախջախվեց Լիլենտալը... Վերջին փորձն էր այդ ողվա. այնուհետև նրանք սկսեցին իրենց սխալներն ուղղել... Այսպիսով լեղբայրները հաղթահարեցին թուիչքի մի շարք գաղտնի դժվարութունները: Թուիչքի ըն-

*) Պլաներ — սավառնակ:

թացքում Շանյուտը կատարում էր մի շարք լուսանկարներ: Հեռանալով Կիտտի Խոուկից՝ ասաց լեզբայրներին.

— Ձեր փորձերը լավագույն արդյունք տվին, քան բոլոր յեղած ոգագնացներին:

Շանյուտի բարեկամական ջերմ գնահատականը վոգեկորեց լեզբայրներին՝ ավելի խիստ գիտական լուծում տալու իրենց անհրաժեշտ ու մոլթ խնդիրներին: Այստեղ միայն նրանք հասկացան, թե ինչո՞ւ յերկու անգամ խոշոր թռչող մոկը չբարձրացավ գետնից: Թռչող մկան համար անհրաժեշտ էր ութ անգամ ավելի շարժիչ ուժ: Մանկության ժամանակվա սխալը լեզբայրները հասկացան այն ժամանակ, յերբ արդեն 29 և 33 տարեկան տղամարդիկ էյին:

* *

1901 թիվը լեզբայրներն անցկացրին զուտ գիտական ասուագումների լենթարկելով թե իրենց ինքնուրույն փորձերն ու սովորածը, թե յեղած բոլոր ոգագնացներին...

— Մենք այժմ չենք խարխափում ուրիշների սխալներում, — ասաց Վիլբուրը՝ գլուխը բարձրացնելով նոր գծագրվելիք սավառնակից: Մենք ունենք մեր սեփական ճիշտ ցուցակներ...

Որվիլը վոգեկորվում էր, յերբ Վիլբուրը լավատեսորեն էր արտահայտվում: Նա չէր սիրում, յերբ Վիլբուրը մոայլվում էր... Հնայած մեկ անգամ այն միտքն արտահայտեց, վոր մարդկությունը հազար տարի հետո միայն կարող է ունենալ իր խիզախ թևերը: Սրան չպատասխանեց Որվիլը. թերևս բոլորովին հուսահատվել չգիտեր, բայց Վիլբուրի հաստատականությանը նա շատ էր հավատում: Այն ուժը, վոր պլաները պահում է ոգում, քամու ուժ է, ինչպես փռանը, թելից կապած, գալարվում է քամու շնորհիվ: Հաճախ այդ քամու ուժը պակաս է լինում:

Վորպեսզի յեղբայրները կախում չունենան բնությունից, նրանք մտածեցին մեքենայի շնորհիվ անհրաժեշտ քամի ստանալ: Իսկ մինչ այդ՝ կառուցեցեն յերրորդ սավառնակը, վորն ուներ մի շարք առավելություններ, — պոչը և թևերը ղեկավարվում էյին միևնույն ղեկով: Յերբ դարձնում էյին թևերը, պոչն իրեն պահում էր այնպես, վոր նպաստում էր ամբողջ մեքենայի պտավելուն: Այդ սավառնակով լեզբայրները հազարից ավելի թռիչք կատարեցին: Յեղբայրները Կիտտի Խոուկից կրկին վերադարձան Դեյտոն: Այս անգամ նրանք պետք է մտածեյին մեքենայի պրոպելլերի և նրա մոտորի մասին: Պրոպելլերներն ուղղակի թիաձև թևեր ունեյին՝ վոլորած և պտավող: Վորքան լեզբայրները շատ վիճեցին, այնքան ավելի խորացան այդ խնդրում:

— Շոգենավի պտուտակը ջրում՝ ճիշտ որինակ կարող է լինել ոգատգործելու, — ասաց Վիլբուրը:

Որվիլը զարմանքով նայեց յեղբոր. ի՞նչ նմանություն կա ողի և ջրի մեջ: Սկսեց տաք վիճաբանություն, վոր տևեց մինչև ուշ գիշեր: Մեքենան շարժվում է առաջ, ողը հրում է յետ, պրոպելլերները պտավում են վոլորապտույտ գծերով, ուստի անհրաժեշտ է յերկու յերկթև պրոպելլեր՝ իրար հակառակ պտավող: Այդ ժամանակ ավելի ուժեղ քամի կստանանք. այն ուժը, վոր լեզբայրներն ստացան պրոպելլերի շնորհիվ, հավասար էր հինգ ձիաուժի: Նրանց պետք էր ընդամենը ութ ձիաուժ մեքենա: Մեքենան կառուցել խիստ դժվար էր: Վոչ մի գործարան չընդունեց նրանց պտավելը: Վերջապես Որվիլն ու Վիլբուրն իրենք իրենց արհեստանոցում կառուցեցին պահանջվելիք մոտորը: 1903 թ. գեկտեմբերի 17-ին Կիտտի Խոուկում լեզբայրները փորձարկեցին առաջին ողանավը, վորն ուներ քամի արտադրող իր սեփական մեքենան՝ բնությունից անկախ: Քամի չկար, բայց այս անգամ

ողանալն ունեւր մեկ ուելսից ճանապարհ, վորի վրա 20 մետր տարածութիւն վազում եր ողանալը և ապա թեք գծով բարձրանում արծվի պես: Առաջին թռիչքը, վոր կատարեց Վիլբուրը, տեւեց հիսուսինն վայրկյան և ծածկեց 250 մետր տարածութիւն: Այստեղ անհաջողութիւն պատահեց, — մեքենան հանգիստ կանգնած եր ուելսի վրա, յերբ մի ուժեղ փոթորիկ այն բարձրացրեց ու խփեց ուժեղ հարվածով գետնին: Մեքենան միանգամայն ջարդվեց: Չնայած Կիտտի Խոուկի մի շարք ընկերներ աշխատեցին բռնել ողանալը, բայց իզուր: — Այ, այսպիսի քամին վտանգավոր ե, քան Նիազարալի ջրվեժը: — Հիշեց Որվիլն իր տարիներ առաջ արած նկատողութիւնը:

*
* *

Ռայտ լեղբայրները շերմ համբուլներով բաժանվեցին Կիտի Խոուկի իրենց սիրելի բարեկամներից ու կլրկին վերադարձան Դեյտոն իրենց հետ տանելով ջախջախված մեքենան:

Այդ ժամանակները Անգլիան և Ֆրանսան ուժեղ աշխատում ելին ողից ծանր մեքենա հնարելու: 1904 թ. Բրիտանական կառավարութիւնն ուղարկեց մի ներկայացուցիչ՝ ծանոթանալու Ռայտ լեղբայրների հնարած մեքենային: Այդ այն ժամանակն եր, յերբ լեղբայրները կառուցեցին յերկրորդ ողանալը: Իրենց բոլոր մտավոր ուժերը, հեծանվի արհեստանոցից ստացած յեկամուտը ծախսում ելին ամբողջապես նորանոր մեքենաներ կառուցելու վրա... Պետք ե ասել, վոր ծանր կարիքը մոտք եր գործել Ռայտ լեղբայրների տունը. ծերունի Միլտոնը չեր աշխատում, իսկ Կետը ուսուցչուհի յեր՝ շատ համեստ աշխատավարձով: Չնայած այդքան ուժեղ կարիքին, Ռայտ լեղբայրները մերժեցին բրիտանական ներկայացուցչին, ասելով, վոր դեռ վաղաժամ ե նրանց առաջարկութիւնը: Լրագրերը շատ քիչ ելին խոսում Ռայտ լեղբայրների հնարա-

գիտութիւն մասին: Վոչ մի կառավարութիւն, մինչև իսկ Միացյալ Նահանգները, չելին հավատում, վոր ինչ-վոր հեծանվային արհեստանոցի վարպետներ կարող են զբաղվել այդքան խիզախ խնդրով, ինչպես ողագնացութիւն խնդիրն ե:

1905 թվին լեղբայրները կառուցեցին մի նոր-լերրորդ ողանալ, վորը բոլոր լեղած ողանալերից ամենից հաջողն եր: Այս ողանալը փորձարկելիս Որվիլին փորձութիւն պատահեց. բարեբախտաբար Որվիլն անվտանգ մնաց:

— Այստեղ մի սխալ կա, — ասաց Վիլբուրը կասկածանքով: — Յերբ անհրաժեշտ ե մեքենան ծռել շրջանաձև պտուկտի ժամանակ, նա ձգտում ե թեքվել կողքի, չնայած մենք աշխատում ենք այն ուղղել: Այս նշանակում ե, վոր մի ուժ կա, վոր դժվարացնում ե մեքենան շուռ տալ. — կենտրոնախույս ուժն ե այդ, վորի ժամանակ առարկան աշխատում ե խուսափել կենտրոնից: Ճիշտ այդպես ե թելի ծայրին կապած քարը՝ շրջանաձև պտտելիս: Ահա թե վորտեղ պետք ե վորոնել այս խոշոր վտանգի պատճառը: Փորձենք մի քիչ թեքել ողանալի քիթը՝ շուռ տալու ժամանակ, մի գուցե այս ազդի՝ հակառակ կենտրոնախույս ուժի, առաջարկեց Վիլբուրն Որվիլին: Որվիլը համաձայնեց՝ ինչպես միշտ, չնայած պատահում եր նաև ուժեղ վիճաբանութիւն այս կամ այն հարցի շուրջը: Այսպիսով 1905 թ. սեպտեմբերին լուծված եր անհրաժեշտ գաղտնիքը:

— Այժմ մենք ունենք իսկական ողանալ, վոր կարելի յե ոգտագործել: Մենք կառաջարկենք Վաշինգտոն՝ կառավարութիւնը: — Վորոշեցին լեղբայրները և նամակն ուղարկեցին: Մինչև պատասխան ստանալն՝ Որվիլը և Վիլբուրը շարունակեցին փորձերն ու թռիչքները: Այժմ թռիչքները կտրում ելին տասնյոթ կիլոմետր տարածութիւն: Բնակչութիւն հետաքրքրութիւնն ուժեղանում եր, բազմութիւնը՝ շատանում, հարցերի տարափը լեղբայրներին զբաղեցնում եր:

— Անհրաժեշտ է ընդհատել թուիչքը, — անհանգստացավ Վիլբուրը: — Ժողովուրդը մեզ հանգիստ չի տալիս:

Բոլորը ցանկանում էլին հասկանալ — ի՞նչն է պահում ողում մեքենային, վսր չի ընկնում... — Ողանավը մնում է ողում, վորովհետև ժամանակ չունի ընկնելու. այդ միևնույն է թե չմուշկի*) վաղը ժամանակ վազել շատ նուրբ սառցի վրայով. սառուցն անպայման կճեղքվի և կջարդվի, չեթե վազողը փորձի կես վայրկյան կանգ առնել: Բայց վորովհետև վազողը շարժվում է առաջ, սառուցը ժամանակ չի գտնում ջարդվելու: Այդպես է նաև ողանավը ողում: Բայց այս բոլորը չե, — շարունակեց Որվիլը, — լավ հասկանալու համար պետք է փորձել թռչել...

Չնայած վերջին ողանավը լավագույն թռիչքներն էր կատարում, այնուամենայնիվ Վաշինգտոնի կառավարությունը բացասական պատասխան տվեց: 1908 թվին միայն ֆրանսացիք առաջարկ արին չեղբայրները գյուտը գնելու: Այնուհետև նոր պատվերները չեղբայրներին ստիպեցին չերկար ժամանակ դադարել թռչելուց: 1909 թվին չերկու չեղբայրների նոր թռիչքները մեկը մյուսից չերկարատև ու հաջող էլին: Թռիչքներն սկսեցին մեկ ժամից ավելի տևել... Բայց սեպտեմբերի 17-ին, չեր Որվիլը բարձրացավ ֆրանսացի Լեյտնանտ Սելֆերջի հետ, մեքենան թռավ ուղիղ ու բարձր. բազմությունը վոգևորություն մեծացրեց: Երբ հանկարծ հսկա սպիտակ թռչունը տատանվեց և խփվեց գետնին: Բազմությունը սարսափահար չեղավ ու լռեց... Սելֆերջն արդեն մահացել էր, իսկ Որվիլը՝ ծանր ջախջախվել: Նրան տարան հիվանդանոց, նա առողջացավ միայն 1909 թվի դարնանը: Մինչ Որվիլի կազդուրվելը՝ Վիլբուրը կատարեց մի շարք նոր չերկարատև թռիչքներ: Նրա նոր ողանավը, վոր կառուցվել էր ֆրանսական կառավարություն համար, արդեն

*) Չմուշկի վազք — վոտնասահնակի վազք:

2 Ժամից ավելի թռիչք էր կատարում, ժամը 65—70 կլոմետր արագությամբ:

* *

Ամռան Որվիլը և Վիլբուրը շարունակեցին իրենց թռիչքները, չերը լրագրական տեղեկատուների բազմությունն աշխատում էր շուտ ու լավագույն տեղեկություններն ստանալ թռչողներին: Նրանք նույնպես ձանձրացրել էլին չեղբայրներին իրենց բազմաթիվ հարցերով: Կարճ ժամանակամիջոցում Ռայտ չեղբայրների ողանավը մասին սկսեցին գրել ամբողջ չերկրագնդի թերթերը... Այդ այն ժամանակն էր, չեր չեվրոպական վոչ մի պետություն չեր զբաղվում ողագնացություն խնդրով:

Միայն Ֆրանսիայում 1906 թվին մի շարք ողագնացներ — Ֆարման, Վուազեն — իրենց սավառակներով, Լուի Բլերիոն — միաթև չերկարապոչ չերկաթե թռչունով, փորձում էլին թռիչքներ կատարել՝ ընդամենը վայրկյանների տևողությամբ: Հետագայում այս ողագնացները համալսմբմբցին Ռայտ չեղբայրների ընկերության անունով:

1910—11 թվականներին Ռայտ չեղբայրներն անցան գիտական աշխատանքների. նրանք սկսեցին թռչելու արվեստը սովորեցնել մի շարք աշակերտներին: Միացյալ Նահանգների կառավարությունն սկսեց ուժեղ կերպով ճանաչել չեղբայրներին՝ վորպես ողագնացության լավագույն հիմնադիրների: Այն ժամանակները Վիլբուրն իր ողանավին նավակներ միացրեց՝ ջրում սավառնելու — ջրից բարձրանալու և ջուր իջնելու համար: Ռայտ չեղբայրներն սկսեցին մի նոր կատարելագործված կառուցվածք ունեցող ողանավի նախագիծը, չերը վերջացրել էլին այն բոլոր ճանապարհորդությունները, վոր ստիպված կատարեցին՝ չմերժելով պետությունների հրավերները: Նրանք կրկին Դեյտոնում էլին — իրենց սիրելի ծերունի հոր և

վր. վերջինս յերկու անիվ ունեւր բարձրանալու համար, ուժեղ մեքենայով և հորիզոնական պոչով: Մեկ տարի հետո նրանք կրճատեցին բարձրութեան ղեկը՝ այդ որվանից նրանց ողանավը հավասարակշռութուն եր պահպանում թւերի ու պոչի ծռումով:

* *

1912 թ. Վիլբուրը գործով կրկին հրավիրված եր Նյու-Յորկ: Վերադարձին նա գանգատվեց մրսածութունից: Շուտով ծանր հիվանդացավ և անկողին մտավ... Որվիլը մնաց տանը՝ կատերինայի հետ յեղբորը խնամելու. բոլոր ընկերները, ծանոթները, լրագրական տեղեկատուները հանգիստ չեցին տալիս — անվերջ հարցնում էին Վիլբուրի առողջութեան մասին: Կատերինան բոլորին միշտ պատասխանում եր տխուր կերպով. — այսօր Վիլբուրը շատ վատ ե զգում իրեն...

Յեւ այսպէս մայիսի 30-ին առավոտյան ժամի յերեքին Վիլբուրը տիֆից մահացավ: Նա այն հասակում եր, վորի առաջ գործելու շատ տարիներ զեռ կային. Վիլբուրը կարող եր գլուտեւ անել և կատարելագործել: Ամբողջ աշխարհի այն բոլոր ծայրերից, ուր անցնում են լուրեր հաղորդող թելերը... ցավակցութուն էին հայտնում մեծ կորուստի համար: Ողազնացութունը շատ վաղաժամ կորցրեց իր լավագույն պիտներներից Վիլբուրին: Ռայտի տղաները, վորոնք հեծանիվի արհեստանոցում հանգիստ ու համեստ աշխատում էին՝ խիստ հասարակ հագուստով, նույնիսկ չեցին ավարտել միջնակարգ կրթութութունը, վողջ աշխարհի մարդկութեանը թւեր տվին...

Որվիլը մնաց մենակ. նա նվիրվեց զուտ գիտական աշխատանքի... և այդ աշխատանքը կատարեց նա իր ամբողջ կյանքում: 1917 թ. մահացավ ծերունի Միլտոն

տերինան միասին, ամբողջ կյանքում...

Յերբ արդեն ողանավերը թռչում անցնում էին ովկիանոսներ, պետութլուններ, յերբ գիտնականներն ողանավերով սառուցների աշխարհում հետազոտութլուններ էին կատարում, Դայտոնի ողազնացութեան լաբորատորիայում աշխատում եր մի ժպտաղեմ, բարեհոգի, կապուտաչա մարդ, վորը թռիչքի գաղտնիքն ավելի լավ եր հասկանում քան վորևէ մեկն ամբողջ աշխարհում: Նրան աշխատանոցում հանդիպում էին իր ընկերները, ծանոթները, պետութլուններից ուղարկված ներկայացուցիչները՝ թռիչքի այս կամ այն գաղտնիքը հասկանալու, խորհրդակցելու... այնտեղ եր հաճախ հանդիպում Որվիլի մանկութեան ընկեր Զիմ Սայնեսը...

Յեղբայրներից վորն ե ավելի շատ աշխատել ու գլուտեւ արել ողազնացութեան համար — այդ դժվար ե վորոշել: Փայլուն միտքը, աշխատասիրութլունը, հնարագիտութլունը յերկուսին ել հավասար նվիրել են ողազնացութլանը:

Յերբ Որվիլը և Վիլբուրը հնարում էին մարդկութեան թւերը, յերբեք չեցին մտածում, վոր այդքան մոտիկ եր համաշխարհային պատերազմը. չգիտեցին, վոր իրենց ջանքերով հնարած թւերը կոգտագործեն մարդկանց վոչնչացնելու: 1914 թվին կապիտալիստներն ողազնացութլունն ողտագործեցին պատերազմական նպատակներով, նորանոր գաղութներ տիրելու: Բուռն տեւպըն ողազնացութեանը կարճ ժամանակամիջոցում այնքան ուժեղ զարկ տվեց, վոր գլուտարարների թիվը հասավ մի քանի տասնյակների: Ասպարեզ յեկան բազմաթիվ կառուցվածքի և տիպի ողանավեր... Այդ բոլոր ողանավերի հիմքը կազմում եր Ռայտ յեղբայրների վերջին ողանավը, վորն այժմ գտնվում ե Նյու-Յորկի ավիացիայի թանգարանում:




7168
Որովիլը դեռևս կենդանի չէր, վոր խորհրդային ավի-
ացիան տոնեց իր տասներորդ տարեդարձը:

1934 թ. փետրվարի 24-ին Որովիլը 69 տարեկան
ծերունի վաստակավոր ողագնաց էր, չէր բխորհրդային
լրագրերում, նաև չերկրագնդի բոլոր թերթերում հա-
ղորդվեց նրա մահվան լուրը:

Կիտտի Սոուկը չի մոռացել իր սիրելի արժիվե-
րին. դեռևս 1925 թվին ավիացիայի համաշխարհային
27-ամյա կոնգրեսին կանգնեցրին մի մարմարե հուշաբ-
ձան. հուշարձանի վրա գրված էր՝ «Այստեղ կառուցեցին
Ռայտ լեղբայրներն առաջին սավառնակը»:

1928 թ. չէր բխորհրդային և Կատերինան թռան Կիտտի
Սոուկ, նրանց ջերմագին ընդունելություն ցույց տվեց
ծերունի Վիլիամ Տեյտի ընտանիքը... Կիտտի Սոուկն
ամբողջ շաբաթ ուրախության մեծ հանդես էր կատա-
րում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0398757

7829

40